

Վանտալ ձեռքն ոճրագործ Դահլիճին բըթամիտ
Մահ արձակեց հոն՝ ուր
Եկեր էիք, Ինտրա՛, ցանկեւ սերմերն աղնիւ
Խորհուրդներուն մաքուր:

Այս իրիկուն նստած Յուլին դէմ Անցեալիս
Կողբամ ես մորմոքած՝
Նահատակումն ահա, Պատանիի՛ն խայտալին՝
Որ իմ հա՛յրն էր եղած...:

Ի՞նչպէս թաղել, մոռնալ չնորհը մեր կեանքին՝
Որ մանկութիւնն է հոն,
Ու դայն չապրած երթալ, չարունակել չղթան
Կեանքին այս ցաւակոծ...:

Կողեկոյնեմ այսօր, քե՛ղ, լըքաւե՛ր ՊաՖրա
Եւ քու անցեա՛լը խաչուած.
Աւա՛ղ, սեւ մոռացումն ահա կու գայ մեղմիկ
Ձեզ ընկըմե՛լ անդարձ...:

Բայց ի՞նչ խորհիմ երբեմն — Եթէ Գերթող մ'երգեց
Աւա՛ն մ'իսկ աննըչան՝
Անոր հորիզոնին՝ իբրեւ լուսապըսակ՝
Կ'իջնէ շո՛ւնչը Գարնան...:

Աւերակներն անգամ բանաստեղծին ձայնով
Կեանքի կու գան յաւէտ,
— Ինչպէս Ակն Ողլիւղի, Ֆերրարայի սեւ բա՛նտն
Ու թերե՛ւս ծաղկաւէտ

Մեր ՊաՖրա՛ն... ուր Ինտրան մեր Ներաչխա՛րհն երգեց...:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

13 Մարտ, 1958
Փարիզ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՎԱՐՈՒԺԱՆ ԴԱՐՁԵԱԼ ՊԵԼՃԻՔԱՅԻ ՄԷՉ

Հայկական օր յորջորջեցին եւրոպական
թերթերը այս տարուան Փետր. 9, որ իս-
կապէս պատմական օր մը դարձաւ մեր
ոսկեամատեաններուն մէջ ալ: Վարուժան
կարծէք յարութիւն առած՝ դարձեալ Պել-
ճիքա կու գար, Կանտի համալսարանը,
բայց այս անգամ դափնիներով լուսա-
դարդ:

Յաղթանակի գիշերն է այս տօնական.
— Հա՛րս, եղ լեցուր նրազին:

Վարուժանի յուշատախտակը կը դետեղ-
ուի, պաշտօնական մեծ հանդէսներով,
Կանտի համալսարանի պատին վրայ. կաղ-
մակերպողներն են Պելճիքայի հայ ուսա-
նողները. եւ պետական բարձրատիճան
անձնաւորութիւններու հետ, խուռն բաղ-
մութիւն մը հայերու հոն են փութացած,
արդար հպարտանքով. մեծ հայ մը կը պը-
սակուի Եւրոպայի մեծագոյն բեմերէն մէ-
կուն վրայ. եւ ամէն հայու կուրծքէն կը
ժայթքի.

Տըղաս կու գայ նախառն հպարտ դափնիով
— Հարս, բեր նրազը շեմին:

Հանդէսին ներկայ անձնաւորութիւն-
ներէն յիշատակութեան արժանի են. Կըր-
թական Նախարարին ներկայացուցիչ՝ Բո-
թէ Պոտար, Ներքին գործոց Նախարարին
ներկայացուցիչ՝ Պօտու, Պատերազմական
Նախարարին ներկայացուցիչ՝ տը Վրիս,
Արեւելեան Ֆրանսիոյ Կառավարիչ՝ Մա-
րիէն, Երեսփոխան եւ Կանտի քաղաքա-
պետ՝ Մերչիէ, Նահանգին զինուորական
հրամանատար՝ զնդապետ Քեսեյս, Հա-
մալսարանին տեսուչ եւ փոխ տեսուչ՝
Լամպրեխթս եւ Ժիւլիս, պատուակալ զօ-
րավարներ՝ Թրօմ եւ Վելլը, Ֆրանսայի
փոխ հիւպատոս՝ Թոլէկ, Փանամայի հիւ-
պատոս՝ Փրովոյ, Պրիւքսէլի Ազատ Հա-

մալսարանին փոխ տեսուչ՝ Պոնիէ, եւ
այլն...:

Միւթարեան Միարանութեան կողմէ
յատուկ պատուիրակութիւն մը փութա-
ցած էր, որուն գլուխն էր Սեւրի Մուրատ-
եան Վարժարանի Տեսուչ՝ Հ. Սեւրթէ Վ.
Ազըլեան. իր հետ Հ. Աւետիք Վ. Թալա-
թիւեան եւ խումբ մը աշակերտներ, իբրեւ
կրտսեր եղբայրներ անմահ Վարուժանի:

Մուրատ-Ռաիայէլեանի նախկին աշա-
կերտներու միութեան կողմէ՝ Պր. Վահ-
րամ Պարկրճեան եւ Պր. Կարպիս Մ. Ա-
լէմշահ:

Հարկ է ընդգծել ու հպարտութեամբ
գնահատել Պելճիքայի հայ ուսանողներու
սքանչելի կազմակերպութիւնը. իսկապէս
չափ լուրջ, կարգաւոր ու զեղեցիկ հան-
դէս մը տեղի ունեցած է, որուն նմանը
քիչ կը պատահի: Արժանի են յիշատակ-
ուելու Կարգադիր յանձնախումբին նա-
խագահ՝ Պր. Էտի Էմիրզեան եւ իր Երկու
վեհանձն օգնականները՝ Պր. Յակոբ Իս-
կէնտէրեան եւ Պր. Երուանդ Բամպուք-
եան. իսկ յուշատախտակին դադափարն
յղացողը եղած է Պր. Խաչիկ Կարապետ-
եան:

Հանդէսին ներկայ եղած են նաեւ Վա-
րուժանի կիներ եւ եղբայրը. Հրանտ Սա-
մուէլեան՝ «Յառաջ»ի կողմէ, Շաւարշ
Նարդունի, Կ. Փօլատեան, Փրոֆ. Ֆրե-
տերիք Ֆէյտի, Լիւք Անտրէ Մարսէլ, Ժան
Պալար, Լիոնի նորակաղմ Մշակութային
Միութեան կողմէ՝ Պ. Դաւիթեան, եւ ու-
րիշ շատեր, նոյնիսկ Պէյրութէն:

Բացման ճառէն վերջ, զոր կատարած
է Փրանսերէն եւ Փրամաներէն՝ Պր. Է. Է-
միրզեան, կարգով խօսք առած են Փրոֆ.
Լամպրեխթս, Բ. Պոտար, Յ. Իսկէնտէր-
եան, Փրանսացի բանաստեղծ եւ հայ բա-
նաստեղծութեանց թարգմանիչ՝ Լիւք Ան-



Դ. Վարուժանի պղնձեայ յուշատախտակը (82x55 հրդմ.) - Հեղ. Փրանսացի արձանագործ **Baron**

տրէ Մարտէլ, էլիզապէթ Թադուհի ա-
նունով եղբորտղիտութեան Հիմնարկու-
թեան ընդհ. Բարտուղար՝ Արթակ Միսի-
թարեան, Փրոֆ. Ֆէյտի, Կարապետ Փո-
լատեան, Կանտի համալսարանին մէջ
Վարուժանի դասընկեր՝ Մաէս, « Բայիէ
տիւ Սիւտ» տնօրէն՝ Ժան Պալար:

Արտասանուած են Վարուժանէն կտոր-
ներ, որոնք Փրանսերէնի Թարգմանուած
են Լիւք Անտրէ Մարտէլի կողմէ: Ամէնէն
վերջ, բուն ծափերու մէջ համալսարա-
նին տեսուէր բացած է պղնձէ յուշատախ-
տակը:

Աւելի ուշ, Պրիւքսէլի մէջ, հայկական
երեկոյթին ընթացքին, Հ. Սերոբէ Վրդ.
Ազըլեան փառաբանած է Վարուժանի յի-
շատակը, վեր հանելով անոր անմահ դաս-
տիարակներուն դերը: Մուրատեան Վար-
ժարանէն չորս պատանիներ ապրումով
արտասանած են Վարուժանէն յիշատակե-
լի կտորներ, բուն ծափերու արժանանա-
լով:

Ու հիմա Վարուժան կը շարունակէ ապ-
րիլ Կանտի մէջ. այնտեղէն կը հսկէ նա

բոլոր այն սերունդներուն վրայ որոնք
պիտի գան իր մօտ ուսանելու. կը հսկէ
բոլոր հայութեան վրայ, մանաւանդ ա-
նոնց որ սփիւռքի մէջ կաշկանդուած, են-
թակայ են բիւր վտանգներու օտարացու-
մի. կը հսկէ նա, ու խրախոյս է միան-
գամայն ամէն հայու՝ իր այս փառաւոր
յարութեամբ եւ անմահութեամբ. անմա-
հութիւն, զոր այսուհետեւ պիտի դաւանին
նոյնիսկ օտարները:

Եթէ երբեմն Հոռմի մէջ կանգնած էր
հայու մը, ճարտասան իմաստասէր հայու
մը արձանը, հիմա ալ կրնանք արդարօրէն
հպարտ զգալ մենք զմեզ, Եւրոպայի ու-
սաններէն, մշակոյթի ոստաններէն մէ-
կուն մէջ տեսնելով նոյնպէս հայու մը
քանդակը. քանդակը անոր, որ քանդակեց
ու քանդակեց:

Նեմեսիսի հրաշապատում արձանագոր-
ծը թող խօսի յաւէտ իր կեանքով, թող
խօսի իր գործով ու նաեւ իր քանդակով՝
բոլոր սերունդներուն որ պիտի անցնին
բիւ մը արեւնալով անոր շունչէն:

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԿՌՈՒՆԿՆԵՐ

Ձմեռուան կէսին արտասովոր է տեսնել
կոռնկներ: Բայց ներկայ դարուս գիտա-
կան յառաջընթացի կողքին՝ տարօրի-
նակ բան չկայ: Այո՛, իսկական կոռնկներ
են մեզի համար, որ կը բանան մեր աշ-
խարհի դադունիքները, կը հաղորդեն մեզի
խապրիկներ՝ այնտեղ եռացող կեանքին եւ
նորանոր յառաջընթացի մասին:

Փրոֆ. Գագիկ Դաւթեան, Երեւանի Պե-
տական Համալսարանի տեսչապետ (Ռեկ-
տոր), առաջինն եղաւ այդ կոռնկներէն,
որ Յունուար 30ին անակնկալօրէն այցե-
լեց Ս. Ղալար: Արեւշող իրիկուն մըն էր.
վերջալոյսի կարմիր շողերը սակայն բա-
ւական եղան յիշատակի լուսանկար մըն
ալ առնելու, վաճառքի քարափին:

Պատկանելի անձնաւորութիւն մըն էր.
զեղուն ու խօսուն բնաւորութեամբ՝ առա-
ջին իսկ վայրկեանէն ցոյց տուաւ մեծ հե-
տաքրքրութիւն ու գնահատումը Միսիթար-
եան յարկին հանդէպ, եւ սիրով զոհացում
տուաւ մեր անսպառ հարցումներուն՝ Հա-
յաստանի մէջ ներկայիս աճող եւ յարաճող
մշակութային ձեռնարկներու մասին:

Բանի մը օր առաջ Փրոֆ. Գ. Դաւթեան
Փիլէնցի մէջ բանախօսած էր հայ-իտալ
յարաբերութիւններու մասին. հրաւիր-
ուած էր իտալեւուն մշակութային Միու-
թեան կողմէ, իրեւ գլուխ՝ ուսական
պատուիրակութեան: Փոքրիկ շեղում մը
կատարելով իր ուղիին վրայ, անպատճառ
ուղած էր այցելել Վենետիկի հայկական
վանքը:

Մեծ հետաքրքրութեամբ այցելեց մա-
նաւանդ մատենադարանն ու տպարանը.
լուսանկարեց Աղթարքի 1512ի տպագրու-
թեան մէկ քանի էջերը. մասնաւոր ուշա-
դրութեամբ զննեց եւ յուզումով դարձուց
մաղաղաթեայ հին ձեռագիրներ, տեսնե-
լով թէ ինչքան զուրկութեամբ կը պահ-
ուին Միսիթարեան յարկին տակ, որ չու-

նենալով հանդերձ պետական կազմակեր-
պութեան մը հսկայական միջոցները,
ջանք չէ խնայած ի պահպանութիւն հայ
դարաւոր արժէքներուն:

Փրոֆ. Գ. Դաւթեան իր հետ նուէր բե-
րած էր կարգ մը հրատարակութիւններ,
որոնց մէջ նաեւ Հ. Ղեւոնդ Ալիշանի Նը-
ւազներէն կատարուած ծաղկաքաղ մը.
հանդերձ կենսագրական տուեալներով եւ
ծանօթագրութիւններով. բերած էր նաեւ
Հայաստանի գեղեցիկ տեսարաններու
հրապուրիչ քարտեր, Պետական պատկե-
րասրահի նկարներու վերարտադրութիւն-
ներու հաւաքածոն. ու նաեւ... հայկական
արեւահամ քոնեաքէն շիշ մը:

Յուզուած էր վերջին պահուն, երբ
փոքրիկ հիւրասիրութեամբ մը ուղեցինք
պատուել մեր շատ սիրելի հիւրը: Փոխա-
դարձ սիրազեղ մաղթանքներ կատարե-
ցինք, մշակութային նորանոր յառաջըն-
թացի միջոցներու, եւ աւելի եւս սերտ կապեր
հաստատելու՝ գիտական ու գրական առ-
պարէզներու մէջ:

Նոյն իրիկունը, աւելի ուշ պահու, Փրոֆ.
Գագիկ Դաւթեան այցելեց նաեւ
Մուրատ-Ռաֆայէլեան Վարժարանը, հոն
ալ գտնելով նոյն սրտաբաց եւ տաք ըն-
դունելութիւնը:

Փրոֆ. Գագիկ Դաւթեան բաղձանդամ
ընտանիքի մը տասներորդ դաւակն է. իր
մայրը յաճախ ըսած է իր փոքրիկ Գագի-
կի մասին. «Հայերս չորս Գագիկ Թադա-
ւոր ունեցած ենք. ասիկա հինգերորդը պի-
տի ըլլայ»: Այս Գագիկը ծնած ժողովրդ-
դավար շրջանի մէջ, ինքն ալ տեսակ մը
Թադաւոր է. Պետական Համալսարանի
Տեսչապետն է:

Կը մաղթենք իրեն եւ իր Համալսարա-
նին մշտապէս վերելք: Համալսարանը իր
11 մասնաճիւղերով եւ 5.000 աշակերտու-
թեամբ ծաղկի յաւէտ ու ճոխանայ օրէ օր.